յստակ, և ի նմին մահիճ, և հնոց՝ ըստ Պուղտանաց, ուրախացայ ոչ սակաւ. և այնու ծանեայ զայցելութիւն Աստուծոյ առ իս, բարեխօսութեամբ Սրբոց Խնամակալուացս, և զոհացայ զնմանէ։ Եւ ի կոյն այրն հիւրընկալ վառեաց զհնոցն, և ասէ. Տէր, մերկացիր ի զգեստուցդ, և ընկողմանեալ յանկողնի աստ հանգիր, մինչեւ ցամաքեցուցից զհանդերձդ. և հասուցից կերակուր ջերմն. գիտեմ զի ներելոց ես ինձ, եթէ զեղացուոյ և ոչ քաղաքացուոյ զխորտիկս առաջաբերից. զի ոչ զայլ ունիմ այժմ ի տանս՝ բաց ի փոքու իմն կոգուոյ, սակաւուց ձուոց և կորկոտէ գարուոյ։ Զոհացեալ զառնէն՝ ննջեցի իբրեւ զժամս երկուս կամ առաւել։ Իբրեւ զարթեայ՝ գտի զհանդերձս ցամաքեցուցեալս և զկերակուր պատրաստ. զգեցայ, կերի և զօրացայ։ Ապա ասացի ցայրն. Տեսանեմ զքեզ այր բարի և երկիւղած յԱստուծոյ. վասն որոյ կամիմ յայտնել քեզ զխորհուրդս իմ, և լսել ի քէն զգացումդ. Ես ի Լէօպօլսոյ հետի փախեա ի ձեռաց Պէրտաց, որք հանդերձեալք էին առնել ինձ զրոնութիւն, և մեծաւ տաժանմամբ հազիւ հասի աստ. եթէ չէիր դու մարդասիրեալ՝ թերեւս ցարդ մեռեալ իսկ էի. յաղագս որոյ շնորհի՝ զոհանամ զքէն. և եթէ կամ լիցի քոյ՝ մնացից աստէն զաւուրս քանիս, մինչև դոյն ինչ զուժ առեալ՝ հետեւեցայց զուղին իմ. և ոչ արդեօք եղեց առ քեզ ապաշնորհ։ Պատասխանի ետ. Տէրութիւն քո գիտասցէ, թէ գեօղս այս Ժուպր՝ պատկանի առ դատաւորն Լէօպօլսոյ, և չէ իսկ հեռի ի քաղաքէ անտի, եթէ ոչ միով մղոնաւ. և նոքա հրամայեցին հանուրց շինականաց թագչել ընտանեօք և գոյիւք իւրեանց յանտառս խորինս, զուցէ յափշտակիցէին յաւարառուաց. որ և քահանայն մեր ոչ համարձակեցաւ մնալ աստ, թէ և յեկեղեցւոջն կարէր բարեպէս ամրանալ. և Տէրութիւն քո զիա՞րդ կարէ միայն յանմարդաբնակի տեղւոջ անքոյթ կալ. կամ ուստի՞ գտանել զկերակուր. քանզի և ես առեալ զանկողինս մնացեալս՝ գնալոց եմ ի գիշերիս՝ յանտառն՝ առ ընտանիս իմ։ Ասացի. Եւ ո՞ւր երթայց, մինչ անտեղեակ վայրիցս և պակասեցեալ յուժոյ, քայլել ցձորակն այն ոչ բաւեմ։ Պատասխանեաց. Ես վասն Քրիստոսի Տեառն մերոյ հասուցանէի սերկ (այսօր) զՏէրդ՝ յապահով և յանքոյթ իմն տեղի, այս է, ի դղեակն Սթառօշէլի՝ որ երիւք եւեթ մղոնօք բացեայ է, եթէ կարիցէի ունել զմիս ձի պատկանաւոր տեառնդ. զի ձիս իմ յերկոցունց աչաց կոյր է, և ոչ ոք բաց յինէն կառավարել գիտէ զայն. արդարեւ ընկերն իմ ունի, բայց զոլով ինքն սոպո և տառ, ոչ կարծեմ թէ կամիցի տալ։ Աղաչեցեալ ուրեմն յինէն՝ գնաց, և ոչ յամեալ՝ եկն ընդ առն և ձիոյն. և գնահատեալ երից զլսթայց և միոյ քառորդի ցքոյ, ետու զվարձն, առեալ ի նմանէ զչիշ մի ապակի, պայմանաւ անդրուստ առաքելոյ զխնդրեալն. և ձիաւորեցայ. հեծեալ և այրն բարի յիւրն երիվար՝ էառ ի գաւակն զսպասաւորն իմ, գնացինք։

Իբրեւ եկինք զառիվերն հուպ անտառին, ասէ ցիս. Տէր, ի հետոց իմոց մի՛ վրիպիցիս, զուցէ մոլորիցիս. զի ոչ ընդ ուղին արքունի՝ այլ ընդ շաւիղս և մերթ ընդ անհետս գնալոց եմք. վասն զի յայսոսիկ ի վայրս աւաղակք Պուղ-